

# Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

## Վերջին Թարմացումները՝

9/4/20: Տեսային Մեկուսացման Ժամանակաշրջանը փոխվել է 72 ժամից 24 ժամի՝ առանց ջերմության: Այն ժամանակաշրջանը, երբ անձը համարվում է վարակող, փոխվել է 48 ժամից 2 օրվա՝ մինչև ախտանշանների ի հայտ գալը:

*Եթե դուք դեկավարում եք ցանկացած տեսակի աշխատատեղ, ձեզ կարող է անհանգստացնել, թե ինչպես վարվել ձեր աշխատակազմի և/կամ ձեր հաճախորդների շրջանակին վերաբերող COVID-19-ի հետ կապված խնդիրների հետ: Ստորև նշված են պատասխաններն այն հարցերին, որոնք մենք ստացել ենք պետական գործակալությունների և մասնավոր ընկերությունների դեկավարներից իրենց աշխատատեղերում COVID-19-ի հաստատված կամ կասկածելի դեպքերի վերաբերյալ:*

*Եթե ցանկանում եք ավելի շատ տեղեկություններ ստանալ նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կամ վիրուսի վերաբերյալ ամենավերջին թարմացումների մասին, ապա խնդրում ենք այցելել Հանրային Առողջապահության Վարչության (DPH) կայք՝*

<http://www.publichealth.lacounty.gov/media/Coronavirus>.

## **1. Ես դեկավարում եմ մեծ աշխատուժով շրջանային գրասենյակ: Աշխատակիցը հիվանդ ներկայանում է աշխատանքի: Նա չգիտի՝ արդյոք վիրուս ունի, թե ոչ: Ախտանշանները մեղմ են, և նա ինձ տեղեկացնում է իր հիվանդության մասին նախքան անձնակազմի այլ անդամների հետ շփվելը:**

Հիվանդ աշխատակցին անհապաղ ուղարկեք տուն: Եթե նա լուրջ հիվանդության ախտանշաններ ունի՝ ինչպիսիք են անբավարար շնչառություն, ճնշում կամ ցավ կրծքավանդակում, կապտավուն շրթունքներ կամ շփոթված տեսք, ապա զանգահարեք 9-1-1: Եթե ախտանշանները մեղմ են, խնդրեք աշխատակցին զանգահարել իր բժշկին՝ բժշկական խորհրդատվության համար: Հաշվի առեք աշխատանքի այլընտրանքային տարբերակների մասին, ինչպիսիք են՝ հեռահաղորդակցական աշխատանքը կամ հեռահաղորդակցական աշխատելու համար այլ պայմանավորվածություններ, եթե աշխատողը ի վիճակի է դա անել: Տեսային խնամքի վերաբերյալ ուղեցույցը՝ նշառական հիվանդություններ ունեցող անձանց համար, ինչպիսին է COVID-19-ը, կարելի է գտնել՝

<http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidcare/> :

Մյուս աշխատակիցները պետք է հաշվի առնեն իրենց նախկին շփումը ախտանշաններ ունեցող աշխատակցի հետ:

- Եթե նրանք սերտ շփում են ունեցել ախտանշաններ ունեցող աշխատակցի հետ մինչդեռ այդ աշխատակիցը ունեցել է ախտանշաններ կամ ախտանշանների հայտնվելուց երկու օր առաջ, նրանք պետք է գնան տուն և սկսեն 14-օրյա ինքնամեկուսացումը: Սերտ կապը դա 6 ոտնաչափից ավելի մոտ հեռավորության սահմաններում ավելի քան 15 րոպե շփումն է, ԿԱՄ առանց պաշտպանության անմիջական շփումն է մարմնի արտազատումների հետ օրինակ, երբ անձը հազում կամ փռչում է ձեզ մոտ կամ երկու անձ օգտվում են միևնույն խմիչքից կամ սպասքից:
- Այն աշխատակիցները, ովքեր սերտ շփում չեն ունեցել ախտանշաններ ունեցող աշխատակցի



# Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

Ինչպես այդ աշխատակիցը ունեցել է ախտանշաններ կամ ախտանշանների հայտնվելուց երկու օրվա ընթացքում, ապա կարող են մնալ և աշխատել: Հիշեցրեք նրանց հետևելու ընդհանուր քայլերի՝ շնչառական վարակների տարածումը կանխելու համար: Բոլոր դեկավարները պետք է խրախուսեն ձեռքերի հաճախակի լվանալը, աշխատողներին հորդորեն չօգտվել այլ աշխատակիցների հեռախոսներից, գրասենյակներից, գրասենյակներից կամ աշխատանքային այլ գործիքներից և սարքավորումներից, աշխատողներին հիշեցնել սոցիալական հեռավորություն կիրառել՝ պահպանելով վեց ոտնաչափ հեռավորություն մեկը մյուսից, խորհուրդ տալ նրանց մաքրել և ախտահանել հաճախ հպված առարկաներն ու մակերեսները և ակտիվորեն խրախուսել նրանց հիվանդ լինելու դեպքում մնալ տանը:

## 2. Ի՞նչ անել, եթե հաճախորդը գալիս է հիվանդության ախտանիշներով:

Եթե ձեր աշխատավայրում ավելանում է հաճախորդների հոսքը, ապա այցելուների համար դյուրին դարձրեք լավ հիգիենայի և շնչառական վարվելակարգի կիրառումը: Նշաններ տեղադրեք՝ խնդրելով, որ հիվանդ մարդիկ օգտվեն ձեր առցանց ծառայությունից: Մուտքերի մոտ տրամադրեք անձեռոցիկներ, աղբարկղներ և առանց հպման ձեռքի մաքրման միջոցներ: Համոզվեք, որ ձեր աշխատակիցները հետևում են սոցիալական հեռավորության կանոններին՝ պահպանելով վեց ոտնաչափ ապահով հեռավորություն իրենց և այցելուների միջև, անկախ նրանից, թե նրանք հիվանդ են թվում, թե ոչ: Եթե ձեր աշխատակիցը պետք է ավելի մոտ լինի հաճախորդին, համոզվեք, որ նրանց միասին լինելը 15 րոպեից նվազագույնի է հասնում: Հաճախորդի հեռանալուց հետո օգտագործեք մաքրող քիմիական նյութեր, Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից գրանցված ախտահանիչ պիտակների առկայությամբ, որոնք պահանջում են օգտագործել առաջ եկող վիրուսային պաթոգենների դեմ՝ սրբելու դռան բռնակները, վերելակների կոճակները, գուլգարանի դռները և այլն, որոնց այցելուն կարող է դիպչած լինել:

## 3. Աշխատակիցը զանգահարում է տեղեկացնելու, որ նրա COVID-19-ի թեստի արդյունքը դրական է: Նա աշխատանքի ընթացքում որևէ ակնհայտ ախտանիշ չունի, բայց նա սերտորեն աշխատել է այլ մարդկանց հետ և հնարավոր է, որ նրանց էլ վարակած լինի COVID-19 վիրուսով: Ի՞նչ քայլեր պետք է ես ձեռնարկեմ:

Այդ աշխատակիցը պետք է մնա տանը և ինքնամեկուսանա : Եթե նրա մոտ շարունակվեն չորս օրվա ընթացքում որևէ ախտանշաններ, ապա թեստավորվելուց հետո առնվազն 10 օր նա պետք է մնա տանը: Եթե նրա մոտ ինչ-որ պահի, զարգանան ախտանշաններ, ապա նա պետք է ինքնամեկուսանա ախտանշանների ի հայտ գալու օրվանից հետո առնվազն 10 օր՝ ԵՎ առնվազն 1 օր առանց ջերմիջեցնող դեղամիջոցների օգտագործման ջերմություն չունենալուց ԵՎ ախտանիշների (օրինակ՝ հագ, շնչարգելություն ) բարելավվելուց հետո:

Ախտանիշներ չունեցող անձինք, որոնց մոտ հաստատվել է վիրուսը, համարվում են վարակիչ իրենց թեստավորման օրվանից երկու օր առաջվանից սկսած: Աշխատակիցները, որոնք սերտ շփում են ունեցել այն անձի հետ, որը շփման պահին վարակիչ է եղել, պետք է մեկուսանան տանը 14 օրով՝ սկսած շփման օրվանից: Սա կիրառվում է բոլոր դեպքերում՝ անկախ այն հանգամանքից, թե վարակված գործընկերը թեստավորումից հետո երբևէ ախտանիշներ ունեցել է, թե ոչ: Եթե թեստը ցույց տա, որ նրանք վարակվել են COVID-19-ով աշխատանքի վայրում գտնվելու ընթացքում, ապա կիրառվում է կարանտինի 14-օրյա կանոնը:



# Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

Սերտ կապը այն է, երբ ցանկացած անձնավորություն 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում ավելի քան 15 րոպե գտնվել է հիվանդ անձի մոտ կամ առանց պաշտպանության անմիջական շփում է ունեցել հիվանդ աշխատողի մարմնից արտադրված հեղուկների հետ (օրինակ՝ հազ կամ փռշտոց դեմքին կամ միևնույն խմիչքից կամ սպասքից օգտվելը):

Հաշվի առնելով, որ իրավական տեսանկյունից դուք չեք կարող մյուս աշխատակիցներին հայտնել հիվանդ անձնավորության մասին: Ցանկացած անձի վերաբերյալ անձնական բժշկական տեղեկությունների հրապարակումը համարվում է հիվանդի իրավունքների խախտում: Աշխատակիցները կարող են գուշակել, թե ով է վարակված անձը, բայց նույնիսկ նրանց կռահելու դեպքում ձեր կողմից այդ տեղեկատվության մասին հայտնելը համարվում է անօրինական: Այսինքն՝ կան քայլեր, որոնք դուք կարող եք ձեռնարկել ձեր մյուս աշխատակիցներին և հաճախորդներին պաշտպանելու համար՝

- Ըստ վերը նկարագրվածի՝ որոշեք, թե ով է սերտ կապ ունեցել տվյալ աշխատակցի հետ աշխատանքի ընթացքում, ընդմիջման ժամանակ կամ նախաճաշելիս: Այդ անձինք վտանգի տակ են և պետք է ինքնամեկուսացվեն 14 օրով՝ սկսած վարակված աշխատակցի հետ վերջին սերտ շփման պահից, երբ հայտնի էր աշխատակցի COVID-19-ով (թեստի կամ ախտանիշների միջոցով) հիվանդ լինելու մասին: Եթե աշխատակիցը, ով շփում է ունեցել և չի հիվանդացել տասնչորս օրվա ընթացքում, այսինքն այն ժամանակահատվածում, որի ընթացքում սովորաբար հիվանդությունը դրսևորվում է, ապա նա կարող է ապահով վերադառնալ աշխատանքի: Միևնույն ժամանակ, նա կարող է նաև հեռակա տարբերակով աշխատել: Վարակվելուց հետո տնային կարանտինի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ աշխատակիցները կարող են ստանալ Հանրային Առողջապահության Վարչության COVID-19-ին ենթարկված անձանց ուղեցույցից՝ [\(http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidquarantine/\)](http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidquarantine/):
- Մանրակրկիտ մաքրեք և ախտահանեք այն սարքավորումներն ու աշխատավայրի այն մակերեսները, որոնց աշխատակիցը կարող է դիպչած լինել, օրինակ՝ դռան բռնակներ, վերելակի կոճակներ, զուգարանի դռներ, պատճենահանող սարքավորումներ կամ այլ գրասենյակային մեքենաներ և այլն: Օգտագործեք մաքրող քիմիական նյութեր՝ Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից գրանցված ախտահանիչ պիտակների առկայությամբ, որոնք պահանջվում են օգտագործել առաջ եկող վիրուսային հարուցիչների դեմ:

Եթե ձեր մյուս աշխատակիցներից մեկի մոտ ախտանշաններ են առաջ գալիս ինքնամեկուսացման մեջ գտնվելիս, ապա նրանք պետք է հետևեն աշխատանքի վերադառնալու վերը նշված ցուցումներին (ախտանշանների հայտնվելուց հետո առնվազն 10 օր ԵՎ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ջերմության առնվազն 1օր բացակայությունից և ախտանշանների բարելավումից):

## 4. Մեր աշխատակիցներից մեկը COVID-19-ի կասկածելի դեպք ունի, սակայն թեստ չի հանձնել:

Այս իրավիճակում դուք պետք է հետևեք վերը նշված բոլոր նույն քայլերին, որին հետևում եք COVID-19-ի դրական արդյունքներ ունեցող աշխատակցի դեպքում: Ներկայիս COVID-19 բռնկման ժամանակ հավանական է, որ մրսաճության և գրիպի նմանվող ախտանիշներ ունեցողներից շատերը ունեն COVID-19: Մարդկանց մեծամասնության համար հարկավոր չէ բժշկի այցելել կամ COVID-19-ի թեստ



# Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

հանձնել, քանի որ նրանք կունենան մեղմ հիվանդություն և կապաքինվեն տանը: Ինչպես վերը նշված է, աշխատողը պետք է ինքնամեկուսացվի, մինչև ցանկացած գործընկեր, որը սերտ կապի մեջ է եղել վարակված անձի հետ մինչ վարակված անձը ունեցել է ախտանշաններ և երկու օրվա մեջ մինչև անձի մոտ ախտանշանների ի հայտ գալը, և վարակվածի հետ վերջին շփումից հետո 14 օր տևողությամբ մնա տանը: Որպեսզի խուսափենք առողջապահական համակարգը ծանրաբեռնելուց, չպետք է պահանջեք բժշկի գրառում, որով կարողարացվի շնչառական հիվանդությամբ հիվանդ աշխատակցի բացակայությունը կամ որով կթույլատրվի, որ աշխատողը վերադառնա աշխատանքի:

## 5. Մեր աշխատակիցներից մեկը վարակվել է COVID-19-ով՝ հասարակության մի անդամի՝ հաճախորդի կամ գործընկերոջ հետ շփվելուց հետո, ով կապ է հաստատել մեզ հետ՝ տեղեկացնելու, որ ինքը հայտնաբերել է, որ վարակված է: Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ: Ի՞նչ կասեք անձնակազմից բացի այլ անձանց մասին, ովքեր գուցե վարակվել են:

Վերանայեք ձեր աշխատակցի շփումը տվյալ այցելուի հետ: Եթե աշխատակիցը 6 ոտնաչափ հեռավորությամբ ավելի քան 15 րոպե հիվանդ անհատի մոտ է գտնվել կամ անպաշտպան անմիջական շփում է ունեցել հիվանդ աշխատողի շնչառական արտազատումների հետ (օրինակ՝ հագ կամ փոշոտոց դեմքին), ապա աշխատակիցը պետք է ինքնամեկուսացվի տանը 14 օր՝ սկսած շփման օրվանից: Ինչպես նախորդ դեպքերում, դուք կարող եք աշխատակցին առաջարկել աշխատել հեռահաղորդակցության տարբերակով: Ստուգեք, թե արդյոք այլ աշխատակիցներ վարակվել են և կարող են համապատասխանել տնային ինքնամեկուսացման չափանիշներին: Եթե ձեր անձնակազմից ոչ ոք սերտ, երկարատև կապ չի ունեցել վարակված այցելուի հետ, ապա ձեզ հարկավոր չէ որևէ քայլ ձեռնարկել անձնակազմի պաշտպանության համար, բացի վարակի շարունակական վերահսկումից:

Այնուամենայնիվ, եթե նույնիսկ աշխատակազմն ապահով է, մյուս հաճախորդները գուցե մոտ են եղել այցելուին, և դուք պետք է քայլեր ձեռնարկեք նրանց պաշտպանելու համար: Հիշեք, որ դա կարող է պատահել բացօթյա հերթի գծի վրա՝ ձեր հաստատությունն մուտք գործելու համար, ձեր հաստատության ներսում գտնվող գծի վրա, ձեր գրասենյակից դուրս գտնվող սպասասրահում կամ սեղանի մոտ, որտեղ հաճախորդները կանգնած են կողք կողքի՝ ձևաթղթեր լրացնելու կամ այլ գործերի համար: Եթե դուք գիտեք այն մարդկանց ինքնությունը, ովքեր միաժամանակ այցելել են ձեր հաստատություն և կարող են սերտ կապ ունեցած լինել վարակված անձի հետ, ապա դուք պետք է կապվեք նրանց հետ և տեղեկացնեք, որ իրենք պետք է մեկուսանան տանը: Խնդրում ենք նրանց ուղղորդել տնային ինքնամեկուսացման վերաբերյալ Հանրային Առողջության Վարչության (DPH) կայքում նշված ուղեցույցներին՝ <http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidquarantine/>: Եթե չգիտեք այն մարդկանց ինքնությունը, որոնք գուցե վարակվել են, ապա հաջորդ լավագույնը, որ կարող եք անել, դա ձեր կայքում կամ սոցիալական լրատվամիջոցների էջում ծանուցում տեղադրելն է՝ տեղեկացնելով բոլոր այն մարդկանց, ովքեր այցելել են ձեր հաստատությունը այն ժամանակ, երբ վարակակիր անձն այստեղ էր, վարակվելու ռիսկի մասին և իրենց առողջությունը վերահսկելու անհրաժեշտության մասին և ուղղորդեք նրանց վարակված անձանց վերաբերյալ Հանրային Առողջության Վարչության (DPH) կայքի ուղեցույց՝ <http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidquarantine/>:

## 6. Ես ղեկավարում եմ պետական սոցիալական ծառայության

# Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

**գործակալություն, որը սպասարկել է հաճախորդներին մեր գրասենյակներում, քանի դեռ մեզ հրահանգված չէր փակվել և այժմ տնային այցեր ենք կատարում հատկապես խոցելի հաճախորդներին սպասարկելու համար: Մեր հաճախորդներից մեկն ունի COVID-19-ի հաստատված դեպք:**

Եթե Դուք սպասարկել եք այս հաճախորդին ձեր գրասենյակում, ապա հարկ կլինի պարզել, թե ով է ցանկացած պահի սերտ կապ (վեց ոտնաչափից պակաս, 15 րոպեից ավելի) ունեցել մինչև հաճախորդը ունեցել է ախտանշաններ և երկու օրվա ընթացքում մինչև հաճախորդի մոտ ախտանշանների ի հայտ գալը: Ինչպես նախորդ սցենարում (Թիվ 5), դուք պետք է վերանայեք, թե ձեր անձնակազմից ով է կապ ունեցել հիվանդ անհատի հետ և որքան ժամանակ: Երկարատև շփում ունեցողները պետք է տնային մեկուսացում անեն:

Եթե Դուք սպասարկել եք այս հաճախորդին տանը ախտանշաններ ունենալու ժամանակահատվածում, ներառյալ նրանց ախտանիշների հայտնվելուց երկու օր առաջ, ռիսկի տակ կլինի նրանց տուն այցելություն կատարած անձը: Տնային այցելուն պետք է 14 օր տնային ինքնամեկուսացում իրականացնի հիվանդ հաճախորդի հետ վերջին շփումից հետո՝ կրկին տնից աշխատելու տարբերակով: Ձեր ծրագրի մյուս անձնակազմը կարող է շարունակվել կանոնավոր աշխատանքային հանձնարարականները:

**7. Ես դեկավարում եմ հանրային անվտանգության գործակալություն: Իմ աշխատակիցներից մեկը աշխատանքի է եկել հիվանդ ժամանակ և վարակի է ենթարկել հանրային անվտանգության մյուս աշխատողներին: Ես չեմ կարող բոլորին ուղարկել տուն: Ի՞նչ պետք է անեմ:**

Ինչպես ցանկացած այլ հիվանդ աշխատակից, այս անհատը պետք է մնա տանը և ինքնամեկուսանա առաջին ախտանիշներն ի հայտ գալուց մինչև առնվազն 10 օր ԵՎ վերականգնվելուց հետո առնվազն 1 օր: Վերականգնում նշանակում է ջերմության բացակայությունն առանց ջերմիջեցնող դեղամիջոցների օգտագործման ԵՎ ախտանիշների (օրինակ՝ հազ, անբավարար շնչառություն) բարելավում:

Մինևույն ժամանակ բացահայտեք այն գործընկերներին կամ հասարակության այն անդամներին, որոնց հետ հիվանդ աշխատակիցը սերտ կապ է ունեցել (ավելի քան վեց ոտնաչափ և ավելի քան 15 րոպե), մինչդեռ այդ աշխատակիցը ունեցել է ախտանիշներ երկու օր նախքան ախտանիշների հայտնվելը: Հրահանգեք սերտ շփում ունեցած անձանց ինքնամեկուսանալ 14 օր՝ վերջին շփման օրվանից սկսած: Եթե այս հրահանգը անձնակազմի պակաս է առաջացնում, ինչը կբարձրացնի ընդհանուր հանրային ռիսկը, ապա այն աշխատակիցները, ովքեր հիվանդության ախտանշաններ չեն ցուցաբերում, կարող են վերադառնալ աշխատանքի՝ օրական երկու անգամ ջերմաստիճանը և ախտանիշները ստուգելով և կրելով պաշտպանիչ դիմակներ: Վարակի վերահսկման ուղեցույցը պետք է ուշադիր կերպով վերանայվի՝ կանխելու վարակի ենթարկված անձանց լրացուցիչ գործընկերների կամ հասարակության անդամներին ռիսկի ենթարկելը:

**8. Ես անօթնանների կացարանի տնօրենն եմ, որը 50 հոգու գիշերային կացարան է տրամադրում: Մեր հաճախակի բնակիչներից մեկը ծայրահեղ բարձր ջերմություն և շնչարգելություն ուներ, և անցյալ գիշեր ստիպված էր**



# Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

## շտապ օգնության մեքենայով տեղափոխվել հիվանդանոց: Ի՞նչ պետք է անեմ՝ անձնակազմին և մյուս բնակիչներին պաշտպանելու համար:

Անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել՝ հայտնաբերելու այլ բնակիչներին, ովքեր սերտ կապի մեջ են եղել վարակված անձի հետ մինչդեռ տվյալ անձը ուներ ախտանշաններ կամ ախտանշանների հայտնվելուց երկու օրվա ընթացքում: Դրանց մեջ կարող են լինել այն անհատները, ովքեր այդ անձի հետ նույն գծի մեջ էին գտնվում մուտք գործելու համար, նրանք, ովքեր նստած էին վեց ոտնաչափ հեռավորության վրա կամ այլ կերպ սերտ կապի մեջ են գտնվել երեկոյան ընթրիքի ժամանակ և նրանք, ովքեր գտնվել են վեց ոտնաչափ շառավղով հեռավորության վրա տվյալ անձի մահճակալից: Յուրաքանչյուր ոք, ով սերտ կապ է ունեցել, պետք է այլ բնակիչներից մեկուսացվի հնարավորինս շուտ: Լավագույն լուծումը կլինի յուրաքանչյուր անհատի հատկացնել անհատական զուգարանով առանձին ննջասենյակ:

Եթե դա իրագործելի չէ, պետք է իրականացվեն վարակակրի հետ շփման ենթարկված անհատներիև ուրիշներից առանձնացնելու այլ միջոցներ: Հանրային Առողջության Վարչության կայքէջում [«Ուղեցույց Անօթևանների Ապաստարաններին»](#) փաստաթղթում կարող եք գտնել պաշտպանված տարածք ստեղծելու մասին առաջարկներ:

Եթե անհնար է պատշաճ կերպով մեկուսացնել վարակակրի հետ շփման ենթարկված բնակիչներին, ապա կապ հաստատեք կարանտինի և մեկուսացման Հանրային Առողջության Վարչության զանգերի կենտրոն՝ անօթևան անձանց համար՝ (833) 596-1009 հեռախոսահամարով, որպեսզի տեսնեք, թե արդյոք այդ վայրում առկա են մահճակալներ, և արդյոք ձեզ հուզող բնակիչները համապատասխանում են իրավասության ուղեցույցներին:

Վարակակրի հետ շփման մեջ գտնված աշխատակազմը նույնպես հնարավորության դեպքում պետք է ուղարկվի տուն մեկուսացվելու: Եթե դա իրագործելի չէ, վարակակրի հետ շփման մեջ գտնված անձնակազմը պետք է կրի դիմակներ և ցուցումներ ստանա սոցիալական հեռավորության և վիրուսի վերահսկման կանոնների վերաբերյալ: Յուրաքանչյուր իրագործելի ջանք պետք է արվի հաճախորդի կապը սահմանափակելու համար:

## 9. Ես դեկավարում եմ մանրածախ բիզնես: Մենք լավ աշխատանքներ ենք կատարել՝ կարգավորելով խանութ մուտք գործելն այնպես, որ ամբոխի չվերածվի, բայց ինչպե՞ս պետք է կիրառենք սոցիալական հեռավորություն աշխատակիցների և հաճախորդների միջև կանխիկ դրամարկղի մոտ:

Սոցիալական հեռավորության վերաբերյալ հասարակական առողջության ցուցումները նպատակ ունեն հաստատել 6 ոտնաչափ տարածություն և ոչ ավելի քան 15 րոպե շփում երկու մարդու միջև: Ընդհանրապես, որքան կարճ է շփումը, այնքան լավ: Պետք է նպատակ ունենաք հնարավորինս սերտորեն պահպանել երկու կետերը: Նկատի ունեցեք դրամարկղի մոտ հատակին գծանշաններ դնել, որպեսզի վճարող հաճախորդը գտնվի փոխադրիչ գոտու հեռու ծայրամասում 6 ոտնաչափ հեռավորության վրա գտնվող այլ հաճախորդներից: Այնուհետև յուրաքանչյուր հաճախորդ պետք է մոտենա միայն այն ժամանակ, երբ գնումներ կատարելու և վճարելու ժամանակն է: Եթե դժվար է հաճախորդներին 6 ոտնաչափ հեռավորության ցուցումներին ենթարկել, ապա այլընտրանք կա յուրաքանչյուր դրամարկղի մոտ ստեղծել մուտքի պատնեշ, որը ֆիզիկապես առանձնացնում է



# Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

գանձապահին հաճախորդից: Ձեզ խրախուսվում է օգտագործել ցանկացած ռազմավարություն՝ աշխատակազմի միջև, և հաճախորդների և անձնակազմի միջև սերտ շփումը նվազեցնելու համար:

